

ԱՌԱՋԱՊՏԴՐՈՒԹՅԱՆ ԾԻՄԱԿՈՒՅՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԽԱՂՈՂ-ԳԻՒԽԻ-ԿԱՐԱՍ ԳՈՎԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԾԻՄԵՐԳԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

ՌԱԻՍԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայ ժողովրդական ծիսերգային բանահյուսության մեջ առանձնակի տեղ էն զբաղեցնում «առաջին պտղի» ճաշակման ծեսին ուղեկցող պարերգերը, հատկապես խաղողի և նոր զինու համտեսին նվիրված ձոներգային-օրինաբանական բնույթի ծիսերգերը (իբրև հաղորդության ծիսարարք)՝ պատղաբերություն - կյանք - հարատևություն - բերքատություն ծիսախորհրդով (առաջին պտուղ - զոհ): Հմմտ. նուրաք - համտես (պր. «Նոր պտուղ»⁹ անձնանվամբ ավանդական կայուն կրկնակի տարրերակները հայ ժողովրդական պարերգերում²:

= Այս Նուրար, թաժա նուրար³:
= Հայ Նուրար, Նուրար, Նուրար⁴:

Նմանատիպ-նմանահունչ կրկնակ-կրկնությունները (դիցանուն-անձնանուն) թէ՝ իբրև երգի բաղադրամաս (կրկնակ), թէ՝ իբրև գեղարվեստական արտահայտչամիջոց (կրկնություն) ափառող են գովք-ձռներգերին և, ընդհանրապես, ողջ ծիսերգային բանահյուսությանը: Հնդկական բանաստեղծական ավանդույթին բնորոշ նման կրկնություններն ընդհանրացվում ու կոնկրետանում են անձնանուններում, որոնց մեջ թաքնված են այն «սրբազնան անունների» կրկնությունները, որոնց և նվիրված են ձռներգերլու⁵:

Op. = *Улу, Уажири, Уажири, Уажири*:

Նոր պտղի ճաշակման ծեսն ուղեկցվել է ողիներին ու աստվածներին առաջնապ-
տուղ-քերքի զոհաբերությամբ՝ նպատակամիտված տարվա քերքառատությունն ապահո-

¹ У. Հարությունյան. Հին հայոց հավատալիքները. կրոնը. պաշտամունքն ու դիցարանը, Երևան, 2001, էջ 50:

² Ու Խաչատրյանը Ազգանդականի և հանպատրաստից հորինման դրսնորումները հայկական պարեգագրում - ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 5, էջ 76-77:

³ *U wj. U k l h p j w n. Հայժ ժող. Երգեր և պարեր, h. I, Երևան, 1949, էջ 220:*

⁴ Բ ե ն ս և ե . Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3, Երևան, 1972, էջ 98:

⁵ В. В. Иванов. Эстетическое наследие древней и средневековой Индии.– В кн.: “Литература и культура древней и средневековой Индии”. М., 1979, с. 11.

⁶ ՀՀ ԳԱՍՏ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանակյուսության արխիվ. Ռ. Խաչատրյանի փոնդ, *FRI* (այսուհետև՝ *FRI*): 2881:

⁷ Զ. Ֆ թ է զ ե ր. Ոսկե ճյուղը, Երևան, 1989, էջ 573:

վելուն: Նման խորհուրդը ուներ արևմտահայոց մեջ «խորխորմանը». կիսահաս ցորենի առաջին հասկերն այրում էին բարձունքների վրա և բոված ցորենը ճաշակելով՝ կրկնում ծիսական ասույթ-բանաձեռ (նկարագիր-պատկեր).

= Խորխորման դիք
Քու ամբար լիք⁸:

Հմմտ. նորաբերքի (busk) սոռնը հյուսիսամերիկյան հնդկացիների մոտ և, ընդհանրապես, նորի ծիսական բմբոնումը տարեմուտին, երբ այրում էին նաև հին զգեստները⁹: Հայոց մեջ բուն բարեկենդանի (Քապապի կիրակի) ծիսակարգին ուղեկցող երգերում (ծիսարարը – ծիսական առարկա, ուտեստ, հագուստ և այլն) պահպանվել է հնի (ավարտ-սկիզբ) ծիսական վերաբտադրման, նոր տարվա բարի ընթացքի կենսապահովման խորհուրդը.

= Ընդ եկան հայոց ազգին օրերը,
Հանեցեք հիները, հագեք նորերը¹⁰:

Հայոց մեջ նավասարդին (օգոստոս) կատարվում էր խաղողի բերքի օրինության ծեսը՝ խաղողօրինեք¹¹, որը քրիստոնեական ծիսակարգում գուգորդվեց Մարիամ Աստվածածնի տոնին: Հմմտ. միջնադարյան ժողովրդական երգերի բնագրերում խաղողի պտղատու ճյուղ (բարունակ) - Մարիամ Աստվածածին լեզվահիմաստարանական նույնացումը (Մեծ բարունակ - Աստվածածին).

= Մեծ բարունակն, որ տեսար
Աստվածածին սուրբ կույսն էր¹²:

Հուն. Դիոնիսոսը (բարու-զինի) խաղողագործության և զինեզործության հովանավոր աստվածը (որի հրաշալի ծնունդն ու դաստիարակությունն անցել էր Նիսանում) իր ծիսական երթերի ու տոնախմբությունների ժամանակ հողի տակից բխեցնում էր զինու, կաթի, մեղրի աղբյուրներ: Դիոնիսոսյան երթերն ու հրաշագործությունները անցնում էին Հունաստան – Սիրիա – Ասիա – Հնդկաստան ճանապարհով և Դիոնիսոսին մշտապես ուղեկցում էին կանայք՝ բարոսուիիները: Նիսան տեղապայրի (որը տեղադրում էին Եգիպտոսում կամ Հնդկաստանում)¹³ անվանումը տարածված էր նաև սաստնցիների միջավայրում՝ իբրև ամսանուն (հմմտ. միջազետրյան օրացույցը), ինչպես նաև Սասնո բանաձենային բանահյութության մեջ:

⁸ FRI : 3007-3008:

⁹ Զ. Ֆ թ է զ է թ. նշվ. աշխ., էջ 569:

¹⁰ Ա. Ք է չ է յ ա ն. Ակն և ակնեցիք, Փարիզ, 1952, էջ 501-502:

¹¹ Վ. Բ դ ո յ ա ն. Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 181, 500:

¹² Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր (այսուհետև՝ ՀՄԺԵ), Երևան, 1956, էջ 455:

¹³ Դիցարանական բառարան, Երևան, 1985, էջ 62-63:

= Յուտ օր Նիսան
Գատ մազրտին քասան¹⁴:

Հստ Պլուտարքոսի՝ հայոց մայրաքաղաք Արտաշատում պարթևների թագաժառանգ Բակուրի և Արտավազդ Բ-ի քրոջ հարսանելան խնջույքի ժամանակ, հույն դերասաններն արքունիքում ներկայացնում էին Եվրիպիդեսի «Քարսուիհներ» ողբերգությունը, երբ այնտեղ են բերում զլիսատված Կրասոսի զլուխը¹⁵: Արտավազդ Բ-ն (մ.թ.ա. I դար) «Քարսուիհները» բեմադրում էր Արտաշատում և Տիգրանակերտում ու պարթևների թագավոր Օրոդեսի հետ բաքոսյան խնջույքներ կազմակերպում¹⁶: Ծիսական աղերսները չեն բացառում նաև դիոնիսոսյան (Դիոնիսոս - այծ - ուլ)¹⁷ և նավասարդյան տոնախմբությունների աշխարհայացրային - իմաստաբանական, ինչպես նաև ծիսական-գործառությային ընդհանրությունները: Հմմտ. հայ միջնադարյան «Գացեք-տեսեք» ծիսերգի պարերգային տարբերակները, որոնք դիտվել են իբրև բարեկենդանին կատարվող նոխագերգություն [(այծ-թուփ), (ուլ-բուտան) հակադրություններով] և որոնք ավարտվում են ձաշակման (ուտել-ոչնչացնել) ծիսախորհուրդն ընդգծող ծիսարարով և, ի վերջո, ծիսաօրիներգային ավարտ-սկիզբ (ծնունդմահ) խորհրդանշող գեղարվեստական պատկերներով (այգի-այծ-թուփ, հուլ-իսան) ու աճող ծավալային զարգացմամբ՝ ծիսական բարի ավարտ ակնկալող՝ կրկնակ - բանատողերով¹⁸.

= ԷՃՆ Էր թվիհն, թուփն Էր իգուն (այզուն),
Իկուն-դիրուն (այգի-այգեկան),
Քո լ բարի, քոլ բարի, քոլ բարի, քո լ¹⁹:

Հայ ծիսերգային բանակյուսությունը լի է հատկապես այգի-խաղող (բաղ, բաղումբի, էղի, էկի, էգեստար), խաղող-գինի-կարաս գովերգություններով ու հնագույն կրկնակներով.

= Բաղումբի հոյ, բաղումբի թոյ, բաղումբի,
= Բաղումբի, հայ բաղումբի,
Բաղումբի, թոյ բաղումբի²⁰:

¹⁴ Ո. Խ ա չ ա տ ր յ ա ն. Թալին.- Հայ ազգագրություն և բանակյուսություն, հ. 19 (այսուհետ՝ ՀԱԲ 19), Երևան, 1999, էջ 242, Նիսան (ապրիլ) ամսին անձրեաջրով մերան էին անում՝ տարին անձրեաբեր և բերքառատ լինելու ակնկալիքով:

¹⁵ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա. Երևան, 1944, էջ 252:

¹⁶ Պ լ յ տ ա ր խ. Իշբանինե բնօգրաֆիա. Մ.-Լ., 1941, ս. 266.

¹⁷ Զ. Ֆ ր է զ է ր. նշվ. աշխ., էջ 459-460: Դիոնիսոսի մակղիրներն էին՝ եզ, եզանման կամ այծ, ուլիկ, սև այծենի կրող (հմմտ. այծի բրոնզե քանդակը):

¹⁸ Ո. Խ ա չ ա տ ր յ ա ն. Կրկնակների ու կրկնությունների գործառույթները ծիսերգերում.- ՊԲՀ, 1991, № 2, էջ 129:

¹⁹ ՀԱԲ, 19, էջ 118-119:

²⁰ ՀԱԲ, 19, էջ 134-135:

Հմմտ. շումերա-աքաղական անձրեկի ու բերքի աստծուն՝ մեռնող-հառնող Բաղին (Թամուգ-Օսիրիս-Ադոնիս) նվիրված տոնախմբությունները, որին պաշտել են նաև Երուսաղեմի տաճարում (մ.թ. ա. IX դ.)²¹: Սասունում տարածված է նաև Թամուգ (հուլիս) ամսանունը²², ինչպես նաև երաշտի ժամանակ կենցաղավարող ասույթ-բանաձեռ. թամուգ՝ բերավորնիր կուզեկուգ²³, Հմմտ. հայ միջնադարյան երգերում հիշատակված՝ Յորժամ մտանք թամուգ ամիս բանատողը²⁴:

Հայ պատմագրության մեջ՝ Բաղը Արամանյակի եղբայր Մանավազի (որը ժառանգել էր Հարրը) որդին էր, որն իր անունով կոչեց հյուսիսարևմտյան ափն ու զավառը²⁵: Հմմտ. Bar, Bay տեղանունների առաստույժունը Արևմտյան Հայաստանում՝ Մեծ Հայքի Տուրուբերանում, Վանի Բաշկալայի, Կարձկանի զավառներում, Էրզրումում, Բիթլիսում և այլուր²⁶: Բաղ բառը Հր. Աճառյանը մեկնում է իբրև հին և առանձին արմատ, նաև՝ կից, յար նշանակությամբ: Բաղումբին համարվել է հասուլ անուն²⁸, սակայն բարդված ձևում առկա է հայերեն ուսմպել՝ ումպ արմատը (խմել, խում), զինքմպուր, սումեր. իմա «խմել», immeli «ըմպելիք, սանսկ. բā-ըմպել արմատից, պր. խոն-կարաս բառից²⁹: Մեր գրառած տարբերակում³⁰ բաղումբին (ըստ բանասաց Առաքել Հովհաննիսյանի < Սուշ, Ծղակ) նշանակում է՝ այգեպան: Դեռևս ամենավաղ ժամանակաշրջանից խաղողը, զինին, ինչպես նաև չամիչը, հայտնի ու տարածված են եղել Վերին Միջագետքում (հատկապես հարավում)³¹, ուր հայեր են ապրել և առկա է եղել հայկական տարրը³²: Վանի խաղողի այզիների մասին Ասորեստանի թագավոր Սարգոն երկրորդը հիշատակում է՝ «Խաղողը թափվում էր անձրեկի նման, իսկ զինին հոսում էր քանց զետի ջուր»³³: Հմմտ. Վանի Ախուրամարի Սուրբ-խաչ եկեղեցու՝ խաղողի որդի զարդաքանդակները աշխարհիկ մոտիվներով: Նավասարդյան տոնախմբությունները համընկնում էին հայոցքուն տումարի սկզբին (զարնանային նավասարդ) կամ վերջին (օգոստոս)՝ երր կատարվում էին հատունացած պտղի (ներկա դեպքում՝ խաղողի) օրինության, ճաշակման ծեսը: Հմմտ. ուկեմայր Անահիտին՝ առաջին բերքի զոհարերումը³⁵: Ընդհանրապես, Նավասարդ-Ամանոր տոնախմբությունները հայոց մեջ, կապված բերքի հատունաց-

²¹ Զ. Կ ո ս ի դ ո վ ս կ ի ի. Բիթլիական ավանդապատումներ, Երևան, 1970, էջ 302-307.

²² ՀԱԲ, 19, էջ 242:

²³ FRI : 3007-3008. Ասույթը ենթապրում էր երաշտ, սաստիկ շոգ, և ըստ այդ՝ կաթի սակավություն:

²⁴ Զ. Կ ո ս ս ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու, Միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ, պր. Ա. Թիֆլիս, 1892, էջ 62:

²⁵ Մ. Խ ո ր է ն ա ց ի. Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 90, Գ ր. Գ ր ի գ ո ր յ ա ն. Հին և միջնադարյան Հայաստանի պատմալիպական հերոսները, Երևան, 1991, էջ 56:

²⁶ Թ. Հ ա կ ո ր յ ա ն. Ս տ. Ս է լ ի ք - Բ ա խ շ յ ա ն. Հ. Բ ա ր ս է ն ա ց ի ա ն. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 568:

²⁷ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 395:

²⁸ Ս պ. Մ է լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 201:

²⁹ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 599-600:

³⁰ ՀԱԲ, 19, էջ 135, 255:

³¹ Ա. Լ ե օ Օ պ պ ե ն ք ե յ մ. Դրевняя Месопотомия. М., 1990, с. 35.

³² Ո. Բ շ ի ս ա ն յ ա ն. Բնիկ հայերեն բառեր և հնագույն փոխառություններ, Երևան, 1989, էջ 64:

³³ Ս. Վ ա ր դ ս ա ն յ ա ն. Հայոց մայրաքաղաքները, Երևան, 1985, էջ 11:

³⁴ Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 455:

³⁵ Դիցարանական բառարան, էջ 18:

ման և փառաբանման հետ, աղերսվել են հյուրասիրության աստծուն՝ Վանատուրին (Վանատուրի տոն) և պահպանվել պարսկահայոց մեջ, Սյունիքում, Գանձակում, Արցախում, ուր և կատարվել են «դաշտային ճաշկերություններ» (ծիսական կերակուրք՝ հարիսան)՝³⁶։ Հմմտ. հարիսայի գովքը միջնադարյան երգերում «Վասն հերիսի»։

= Այ հերիսա իմ գովելի,
Բազում բարեաց ես արժանի³⁷:

Լեզվագիտական տվյալներով՝ խաղողի այգի, գինի, որթ, տորք (խաղողի որթի թե), արգատ (էտած ճյուղ) անվանումները մեկ անգամ ևս հավաստում են, որ խաղողագործությունը հայտնի ու ծանօթ է եղել վաղնջահայերին³⁸։ Հմմտ. հին հայոց առասպելաբանական ավանդության մեջ խաղողի որթի բուսանումը՝ այգում թաղված հորթի (հին հայերենում՝ որթ) ազդությաց³⁹: Ըստ Քսենոֆոնի՝ Հայաստանը հայտնի է եղել իր տարատեսակ և բարձրորակ գինիներով⁴⁰: Հերոդոտոսը վկայում է, որ հայերի ու բարեկացիների միջև առևտրի հիմնական առարկան եղել է գինին⁴¹: Հմմտ. գինի հ-ե առօտո, արար ասսմ - սո «սև խաղող», երբ - yayin, աքաղ - ini - գինի⁴²: Խաղողի տարբեր տեսակները, գունային հատկանիշները (սև-սպիտակ-կարմիր-դեղին), ինչպես նաև՝ գինու (կարմիր-սպիտակ) բերքի հասունացման, այգեկությի հավաքման գործընթացը (այգի-հնձան-կարաս-գինի) պտուղների մշակումը (խաղող տրորել) իրենց գեղարվեստական դրսնորումներով բազմից հիշատակվել ու գովերգվել են հայ միջնադարյան ժողովրդական երգերում («Վասն խաղողի»)⁴³.

=Հառաջ զիսաղողն տնկեցին,
Եվ բարձրածայն զայն գովեցին⁴⁴:
= Խաղող դ, զքեզ գովել պիտի,
= Անմահության պտուղ ես դու:
= Զքեզ քաղեն, տանին հնձան,
Ճմլեն զքեզ ու տան յիրար,
Տանին լնուն զքեզ կարաս⁴⁵:
= Ողկեյզ հաւողն հասեալ է,
Թուիս ու սպիտակ կախեալ է,

³⁶ Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 195:

³⁷ Վ. Կ ո ս ս ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Ա, էջ 50-56:

³⁸ Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, նախարային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 263-370:

³⁹ Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ հին վիպաշխարհը, Երևան, 1987, էջ 26, ն ո ւ յ ն ի՝ Հայ առասպելաբանություն, էջ 264:

⁴⁰ Հ ե ր ո դ ո ւ ն ո ւ ս ս. Պատմություն ինը գրքից (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986, էջ 569-570:

⁴¹ Նույն տեղում, էջ 569

⁴² Գ. Ջ ա հ ո ւ կ յ ա ն ն շ վ. աշխ., էջ 450:

⁴³ Վ. Կ ո ս ս ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Բ, Թիֆլիս, 1892, էջ 41-47:

⁴⁴ Նույն տեղում, էջ 41:

⁴⁵ Նույն տեղում, էջ 46-47:

Կարասն՝ զինով լցեալ Է⁴⁶:
= Ազգ մի թուխ, ազգ մի սպիտակ,
 Ազգ մի կարմիր, որ լուս կուտար,
 Ազգ մի դեղին խունկի նման,
 Անուշահոտ մուշկ ու ամպար⁴⁷:
= Հնձան եմ փորեր այգոյս,
 Կարաս եմ լցեր զինոյս⁴⁸:

Հստ հայ միջնադարյան վիմագրերի՝ հնձաններ ու այգիներ էին նվիրաբերում վանքերին ու եկեղեցիներին⁴⁹: Հայոց ամանորյա տոնախմբությունները (Նավասարդ-Ամանոր-Բարեկենդան) ուղեկցվում էին տարվա բերք-բարիքն ապահովող գովր-օրիներգություններով ու բարին ավետող ժողովրդական ավետիսներով. խաղող-զինի-կթիս-կախան ձռներգային բնույթի ծիսերգերով՝ նորի, սկզբի ավետման ու աշխարհի նորացման ծիսախորհրդով (ծնունդ) տարվա առաստության ակնկալիքով, ծիսերգերի բանատողերում մշտապես կրկնվող (եալալի, ալելա, ավետիք, ավետիս) հնագույն կրկնակներով. ալելա-արադ ալաւ-երգել, ցնծալ, փառարանել, որից էլ՝ ալելուիան՝ որպես ցնծության, փառարանության երգ՝ նվիրված աստծուն⁵⁰: Դրանք մշտապես ուղեկցվում էին տղարերք, նոր տուն, նոր հագուստ, նոր բերք, նոր զինի և այլ գովերգություններով, օրինանք բարեմաղթություններով և բարին ավետող բանատողերով.

= Կախանն եօր է, վաղն կաղանդ, ալելա⁵¹:
= Ինոր մառանը լիքն է զինով, ալելուա⁵²:
= Կարասն Զեր լցվի զինով, ավետիս⁵³:
= Կթիսան ի մեջ զինով ի լի, ավետիս⁵⁴:

Գովերգվել է նաև խաղողի («Վասն խաղողի»)⁵⁵ որքն ու որթաստունկը, որը բնիկ հայ բառ է, սերում է հնդեվրոպական՝ *partu* նախաձեռից՝ նշանակելով ընձյուղ, շառավիղ, ծիլ⁵⁶:

= Որթն դրախտարույս է տունկ
 Չոր բերե զխաղողն ողկուզեայ,

⁴⁶ ՀՄԺԵ, էջ 429:

⁴⁷ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Բ, էջ 46:

⁴⁸ ՀՄԺԵ, էջ 437:

⁴⁹ Ս. Հ ո բ ո ս յ ա ն. Այզին միջնադարյան հայերեն վիմագրերում. – Հայ ժողովրդական մշակույթ, XII, Երևան, 2004, էջ 80-85:

⁵⁰ Ո. Խ ա չ ա տ ր յ ա ն. Կրկնակների ու կրկնությունների գործառույթները ծիսերգերում, էջ 135:

⁵¹ Ե. Տ է ր - Պ ո դ ո ս յ ա ն. Նոր տարվա ստոր հին և նոր հայոց քով, Վիեննա, 1952, էջ 32:

⁵² Գ. Շ է ր է ն ց. Վանա սազ, Թիֆլիս, 1885, էջ 79-80:

⁵³ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Ս, էջ 12:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Գ, Թիֆլիս, 1896, էջ 63-66:

⁵⁶ Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 578-579:

Ազնիվ գովական պտուղ,
Ճաշակածն ասեն Աղամայ⁵⁷:
= Տունկ եմ տնկեր այս այզոյ,
Կանաչ բարունակ հողոյս⁵⁸:
= Ասես թէ կտրած ես դու,
Ի ճերմակ որթոյն խաղողեն⁵⁹:

Այզի (էզի-օրթող) գեղարվեստական դրսևորումները ի սկզբանե աղերսվում են ծիսապարերգային բանահյուսության հնագույն շերտերին, ինչպես նաև՝ ծիսերգերին առներգերին (դիցանուն-անձնանուն), ուր առկա են նաև այգեկութին նվիրված գեղարվեստական պատկերներն ու գեղարվեստական ընդհանրացումները (այզի-օրթող-կին), իմաստ. Դերիկոն (սեմ. Դերկետո), Դերիկոն հոյ նար⁶⁰ առներգերը.

= Դերիկոն էլավ գերթեր էզին, Դերիկոն ջան,
Ինքն էր, իր ջուխտագ դեկերգին, խանմե ջան,
Գշորորեր մըրօրթողին, Դերիկոն ջան,
Օվ օր դեսներ գեղներ հոկին, խանմե ջան⁶¹:
= Էլեր իս իզին խաղող գրաղես,
Շամամ ծծերովդ շաքար կմաղես⁶²:

Հմմտ. Ամանոր-կույս կերպարային ընդհանրությունը, որին զոհաբերում էին հասունացած պտուղները (ներկա դեպքում խաղող), որին և միտված էր ճաշակման ծեար⁶³: Զոներգերին տիպորոշ նման գեղարվեստական ընդհանրացումներով ու պատկերներով՝ այզի (բաղ) - այգեկութ (խաղող քաղել) - զինի - յար (կիւզել) - սեր լեզվահմաստարանական նոյնացումներով ու կերպարային ընդհանրություններով լի են նաև միջնադարյան անտունիներն ու հայրենները.

= Լուկ ցարթեց շառավիղն ի յէզին,
Խաղողն ալ զիր պէյժն ասաց.
Թէ հասա սրտիս մուրատին,
Օր մըր կիւզելին ծոցին,
Քանց հազար ներքեւ տերևին⁶⁴:
= Գիտան ալ զինով լցած,
Իմեարին առջևն էր դրած,

⁵⁷ Կ. Կ ու տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., սյր. Ա, էջ 39:

⁵⁸ ՀՄԺԵ, էջ 429:

⁵⁹ ՀՄԺԵ, էջ 43:

⁶⁰ ՀՄԲ, 19, էջ 122-123:

⁶¹ Նույն տեղում:

⁶² Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց. Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 548:

⁶³ Ս. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, էջ 50:

⁶⁴ Ս. Ա բ է դ յ ա ն. Երկեր, հ. Բ, Երևան, 1967, էջ 169:

Խմէ է յեար իմ դիմաց,
Որ ելնէ հոգիս քո դիմաց⁶⁵:
= Կխմէ ու հայերէն կասէ.
Թինչ անուշ է սերն ու զինին⁶⁶:
= Շուշա մի զինի բերէմ,
Ան խմեմ քո սիրուն վրա⁶⁷:

Պատահական չէ, որ զինու և ուրախության երգերն իրենց բնույթով ու բովանդակությամբ անպայմանորեն աղերսվում են սիրո երգերին⁶⁸: Հայ ծիսերգային բանահյուսության մեջ ձաշակման ծեսին և զինու համտեսին նվիրված միջնադարյան գովք-ավետիսներում առանձնակի են ընդգծվում կարասների բացումը, բարի ավետումն ու գովերգությունը (կարաս-զինի-յար) գեղարվեստական ընդհանրացումներով.

= Ես քեզ կարաս բանամ գերիս,
Եւ քեզ բերէմ անուշ զինիս,
Զի դու խմես ու կարմրիս,
Ավետիս տամ հայոց ազգիս⁶⁹:
= Խնդրամք ամեն շուրջ կարասիս
Ավետիս տամ հայոց ազգիս⁷⁰:
= Գինիս անուշ երբ ձաշակիս,
Դու այլ խմե զգավաթնիս,
Ավետիս տամ հայոց ազգիս⁷¹:
= Գինիս աղեկ, ձաշակն աղվոր,
Անուշ խմենք քաղցր և յորդոր⁷²:
= Այզի, եարուն և մեզէ,
Խելքն ու միտքն կարասն է⁷³:

Հմմտ. հնագիտական պեղումներից Թեյշեբայինից՝ Կարմիր բլրից հայտնաբերված զինու հսկայածավալ կարասները, Նոյ նահապետի՝ նորահաս այզու խաղողից զինի պատրաստելը, կարասների բացումը, զինու ձաշակումն ու բաշխումը մարդկանց⁷⁴:

⁶⁵ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Գ, էջ 51-52:

⁶⁶ Մ. Մ բ է դ յ ա ն. Երկեր, հ. Բ, էջ 258:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ Ա. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. Հայ ժողովրդական բանահյուսություն.- Ժողովրդական երգեր, պր. VIII, Երևան, 1946, էջ 55:

⁶⁹ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., պր. Բ, էջ 50:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ Նույն տեղում:

⁷² Նույն տեղում, էջ 47:

⁷³ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., հ. Ղ, Վաղարշապատ, 1903, էջ 72:

⁷⁴ Ա. Ղ ո ւ կ ա ս յ ա ն. Հայրենի ավանդավեպեր, Երևան, 1985, էջ 11:

Դիոնիսոսին նվիրված հունական անթեստերիաների առաջին օրը նույնպես կոչվում էր տակառների բացման օր, իսկ երկրորդ օրը՝ բաժակներ⁷⁵: Հայոց մեջ՝ խաղող-գինի-կարաս գովերգարեգերի (հատկապես, մըր դան էղիվ քառուն զարաս) բանատողով տարբերակ-ները (ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ 22) երգվում են տարբեր կրկնակներով. բաղում-բի⁷⁶, բառումբի⁷⁷, Ալաշկերտի տարբերակում՝ պաղըմի ճան պաղըմի, ճանիման, ճանիման⁷⁸, դռնիգ, դռնիգ, դռնիգ յարէ⁷⁹, դռնի, դռնի, դռնի յարէ, վրլը դռն դռնի յար⁸⁰, գինի լի ց՛տ, գինի լի ց և այլն: Դրանք ունեն ծիսերգերին բնորոշ ոչ միայն ծիսահմայական (որոնք կրկնվելով ստեղծում են խոսքի հմայական զորություն), ձռներգային-օրինաբանական բնույթ, այլև ապահովում են ծեսի ծիսակատարողական, հովարտահայտչական ու գեղագիտական գործառույթները: Պարերգային տերստի բոլոր ձևափոխությունների նկատմամբ անփոփոխ այս կայուն-ինվարիանտ-բանատողերը (ներկա դեպքում՝ մըր դան էղիվ քառուն զարաս) երբեմն նույնությամբ կարող են հանդիպել այլ պարերգերում՝ իմաստային ոչ մի կապ չունենալով դրանց հետ, որը և կարելի է դիտել իբրև պարերգային զարգացման առանձնահատկություն: Նմանատիպ ծիսապարերգային ինվարիանտները պահպանված քնարական երգերի տեսքով, անպայմանորեն ունեն իմաստաբանական կայուն հիմք ու մեկնակետ և իրենց ձևակառուցվածքային հատկանիշներով ու բովանդակությամբ աղերսվում են ծիսա-արտադրական կենցաղին և ավարտվում պայման-հետևանքային բանաձևերով, որոնք բնորոշ են նաև երկրագործական ծիսական կենցաղում իրագործվող այլ ծիսերգերի (բարեմաղթանք-բանադրանք հակադրությամբ. հմմտ. Վեվ օր տա շեն մնա, վեվ օր չտա չոր չորնա)⁸², որոնք և հուշում են դրանց կատարման հանրային ու ծիսական բնույթը.

= Թը տու իդաս՝ տու զորենաս,
Թը տու չիդաս՝ տու կոտենաս⁸³:

Կարաս-գինի գովերգությունները՝ իրենց կայուն ավարտ-բանատողերով (օրինանք-բանադրանք), իմաստաբանական հենքով (ճաշակման խորհուրդ) հանդիպում են մեր գրառած հնագույն բաղումբի⁸⁴, (որը ծիսերգի վերնագիրն ու կրկնակն է), Դերիկո-Նինա (ծանր-պար)⁸⁵ ձռներգ-ծիսերգի տարբերակներում, ուր նույն ինվարիանտ բանատողերը (մեր դռան առաջ քառուն կարաս) գեղարվեստական թաքնված պատկերներով (կարաս-գինի-լինի-համբույր) նպատակամիտված են ճաշակման խորհրդին ու պտղաբերման զաղափա-

⁷⁵ Դիցարանական բառարան, էջ 19:

⁷⁶ ՀԱԲ, 19, էջ 135:

⁷⁷ Ս պ. Մ ե լ ի ք յ ա ն. նշվ. աշխ., էջ 219:

⁷⁸ Ազգագրական հանդես, VII-VIII, Թիֆլիս, 1901, էջ 442-443: Այս տարբերակում՝ բացակայում է կարասների մոտիվը, իսկ ճանիման կրկնակով պարերգում՝ պահպանված է:

⁷⁹ Վ. Պ է տ ո յ ա ն. Սասունի բարբառ, Երևան, 1954, էջ 79-80:

⁸⁰ ՀԱԲ, 19, էջ 138, FRI : 3249-3250:

⁸¹ Մ. Թ ո ւ մ ա ճ ա ն. Հայերենի երգ ու բան, հ. 3, Երևան, 1986, էջ 114:

⁸² Ազգագրական հանդես, գիրք II, Թիֆլիս, 1897, էջ 268:

⁸³ FRI : 3249-3250:

⁸⁴ ՀԱԲ, 19, էջ 135:

⁸⁵ Վ. Պ է տ ո յ ա ն. Սասունա ազգագրությունը, Երևան, 1956, էջ 395:

րին՝ ընդգծելով կարասների քանակը՝ 40, զինու խմբումն ու հասունացումը (զինին է հաս), որակը (զինին է խաս), համտեսի քաժակը (տարբերակներում հանդիպող՝ օսկե գումզում՝ սափոր, թաս, փարչ, կթղա, քաժակ, զավաթ և այլն) և, ի վերջո, ակնկալվող անապական համբույրը (պազիկ մի տաս) պայման-հետևանքային քանաձեռվ. (թը տու չիդաս՝ տու կոտենաս)⁸⁶.

= Մեր դրան առաջ քառուն կարաս,
 Բաղումբի, հայ քաղումբի,
 Զեր դրան առաջ քառուն կարաս,
 Բաղումբի, թոյ քաղումբի,
 Քառուն կարսի զինին էր հաս,
 Բաղումբի, հայ քաղումբի,
 Ամեն փարչից կթիւն իդաս,
 Բաղումբի, հայ քաղումբի,
 Ամեն կթիւնին մե պազմ տաս
 Բաղումբի, թոյ քաղումբի⁸⁷:
 = Քամին զարկեց, ծոցվին էրաց,
 Բաղումբի հոյ քաղումբի,
 Օվ որ տեսավ խելաց զնաց,
 Բաղումբի հոյ քաղումբի, թոյ քաղումբի⁸⁸:
 = Մեր դրան առէջ քառուն կարաս,
 Քառուն կարսի զինին էր խաս,
 Ամեն կարսէն մեկ թաս իտաս,
 Թի դու չի տաս դու զօտենաս⁸⁹:
 = Բառումբիլ հոյ քառումբիլ,
 Թոյ քառումբիլ, խոշ քառումբիլ:
 Մեր դրան առաջ քառուն զարաս,
 Զեր դրան առաջ քառուն զարաս,
 Քառուն կարսի զինին էր խաս,
 Ամեն կարսին արձրթե թաս,
 Ամեն թասիս պազիկ մե տաս⁹⁰:
 = Մըր դան էդիվ քառուն զարաս,
 Վըլը դոն, դոնի յը,
 Քառուն զարսի կինին էր հաս,
 Բիլը դոն, դոնի յը:

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ ՀԱԲ, 19, էջ 135:

⁸⁸ Հայ ժողովրդական երգեր և նվազներ, Թալին, Երևան, 1984, էջ 161: Այս տարբերակում չկա կարասների մոտիվը, նույնն է միայն կրկնակը քաղումբի:

⁸⁹ Ազգագրական հանդես, զիրք VII-VIII, էջ 442-443: Կրկնակը կրկնվում է տողընդմեջ:

⁹⁰ Ս պ. Մ է լ ի ք յ ա ն նշվ. աշխ., էջ 219:

Ամեն զարսին՝ պաժազմ՝ դաս,
 Վըլը դոն, դոնի յլ,
 Պաժազմ՝ դաս՝ տու զորենաս,
 Բիլը դոն, դոնի յլ,
 Ամեն պաժգին՝ բաճիգ մ՝ դաս,
 Վըլը դոն, դոնի յլ,
 Բաճիգմ՝ դաս՝ տու զորենաս,
 Վըլը դոն, դոնի յլ,
 Թը տու չիդաս՝ տու կոտենաս,
 Բիլը դոն, դոնի յլ⁹¹:
 = Մեր տան հետև քառուն կարաս,
 Քառուն կարսի գինին էր խաս,
 Յըմեն թասին՝ պազիկմ՝ տաս⁹².

Հիշյալ տարբերակների մեծ մասում ճաշակման խոհրդին՝ բարեյուսված է «ծիսական համրույրի»⁹³ զաղափարը (պազիկմ՝ տաս, մե պազմ՝ տաս, բակմ՝ իդաս, բաճիգմ՝ դաս և այլն): Հայ ժողովրդական վեպում՝ ծիսական համրույրն ընկալվել է իրքի ամուսնության առաջարկ լիմմու. Դավթի խաչաձև համրույրը, որի համար պատժվում է՝ ապտակ ստանալով Խանությօց/ծիսարգելքի խախտում-պատիժ], ինչպես նաև վեպում ու հերիաքներում՝ աղջկա դեմքին պիսակ (նշան) թողնելը⁹⁴: Մեր գրառած Սասնո հերոսապատումում⁹⁵ Սարա հայ փաշայի փոքր որդին համրուրում է 40 օր քնած Քաջանց թագավորի աղջկան և շաղթահարելով «ծիսական հանդերձանքի» արգելքը (յոտ վարտիք ը ախճաս վրեն, զիանը, զմնը մեզ)⁹⁶, հեռանում է՝ թողնելով համրույրի հետքը դեմքին. «զննը՝ խա լ զընգնի»: Վերջինս արթնանալով՝ տեսնում է համրույրի հետքը և իրեն համարելով արատավորված (ըյրլու) բազում փորձություններից հետո (ընդհուպ մինչև նրան պատերազմ հայտարարելը), ի վերջո, ամուսնում է հետք՝ սերելով Սանասարին: Հմմու. Ուրուկի սիրված աստվածուհու՝ Ինաննայի կերպարը⁹⁷: Ծիսական համրույրը (ծիս. սեմանտիկ նշան) իր գեղարկեստական կայուն դրսնորումն է գտել նաև հայոց երկրագործական ծիսական կենցաղին աղերսվող «Համբարձման երկուշաբթին» պարերգի տարբերակներում (բակուգ-զարմ-րուգ)⁹⁸:

= Քնուգ էր, քրդնուգ էր,
 Բակուգ էր, զարմուգ էր,

⁹¹ ՀԱԲ, 19, էջ 138:

⁹² Բ է ն ս ե. նշվ. աշխ., էջ 102:

⁹³ Վ. Բ դ ո յ ա ն. Հայ ազգագրություն, էջ 137-138:

⁹⁴ Նույն տեղում, էջ 138:

⁹⁵ ՀԱԲ, 19, էջ 20:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ С. Н. К р а м е р. История начинается в Шумере. М., 1965, с. 96-99.

⁹⁸ Ո. Խ ա շ ա տ ր յ ա ն. Համբարձման երկուշաբթին պարերգի իմաստափառանական վերլուծության փորձ. - ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական զիտությունների», 1991, № 6, էջ 92-93:

*Բակն էրեսին փոռուզ էր,
Վախենամ՝ խոռվուզ էր^{99:}
= Քնուկ էր, քրդնուկ էր,
Սիրուկ էր, զարդուկ էր,
Պագուկ էր, կարմրուկ էր
Վարդն էրեսին՝ փոռուկ էր,
Վախենամ՝ խոռվուկ էր^{100:}*

Ծիսական համրույրի մոտիվը (օրինանք-բանադրանք հակադրությամբ) առկա է հատկապես, ճաշակման խորհուրդն ամրողացնող խաղող-կարաս-զինի-յար գովք-բանատողերում, որոշ տարբերակներում հանդիպում են աշխարհիկ տրամադրություններ ընդգծող դիմում-հորդորային բնույթի կրկնակներ, որոնք բնորոշ են նաև միջնադարյան ժողովրդական տաղերին.

= Մեր տուն կա քառսուն կարաս,
Քառասունին ալ՝ զինին էր հաս:
Գինի լի՛ ց, աղբա ր, զինի լի՛ ց,
Խմողացիդ՝ անուշ լինի^{101:}
= Այ լի՛ ց ու տուր, այ լի՛ ց ու տուր,
Անապակէդ այ լի՛ ց ու տուր^{102:}
= Այ լի՛ ց ու տուր,
Այ լի՛ ց ու տուր,
Զանուշ զինուդ
Անապական^{103:}

Խաղող-զինի-կարաս գովերգություններում ու ձոներգ-ավետիսներում առանձնակի է գովերգվում նաև զինու բաժակը (զավաթ-թաս-փարչ-բաժակ-կթղա և այլն).

= Այսօր տոնեմք ձեզ ավետիս,
Ահա ցնծամք յայսմ՝ տոնիս,
Բարով տեսա զաւայքն յափիս,
Ավետիս տամ հայոց ազգիս^{104:}
= Ես զբաժակն գովեցի,
Որ մեր հոգուն է լուսարար^{105:}
= Խմեն ի լի մեծ փառչով նոր^{106:}

⁹⁹ Կենդանի կենցաղավարող երգային բանահյուսություն:

¹⁰⁰ Ա. Թթ ու մա ձ ա ն. Հայրենի երգ ու բան, հ. 3, էջ 114:

¹⁰¹ Ա. Թթ ու մա ձ ա ն. Հայրենի երգ ու բան, հ. 2, Երևան, 1983, էջ 153

¹⁰² Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., սյր. Գ, էջ 63:

¹⁰³ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., սյր. Բ, էջ 41-45:

¹⁰⁴ Նոյն տեղում էջ 49-50:

¹⁰⁵ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., սյր. Գ, էջ 69:

= Սիրով իմէ վեց թաս ի յիս,
Սերն Աստուծոյ կամ սուրբ Սարգիս¹⁰⁷:
= Էն գինին օր գիսմիս
Զեռ չղողա՝ կթխեն շողա¹⁰⁸:

Հմմտ. կարասների օրինումը («Օրինեսցի և պահպանեսցի կարաս վանքիս, վասնզի աստված օրինեց Նոյր՝ առաջին անգամ արեղաթող ընելուն համար»)¹⁰⁹ և գինու ճաշակման ծիսական արարողությունը, գովքն ու օրիներգությունը Բարեկենդան-Արեղաթող ծիսակարգում.

= Գինին է զորեղ,
Դուք անու շարեք¹¹⁰:

Ճաշակման և հաղորդության խորհուրդ ունի նաև քրիստոնեական պատարագի ժամանակ իրագործվող սուրբ հաղորդության գինին (Քրիստոսի արյուն), որը մատուցվում է հատուկ բաժակով և ավարտվում ժողովրդական ծիսերգերին տիպորոշ («խմողաց՝ անուշ») օրինաբանական նույնատիպ բանաձևով՝ «խմողն է օրինած»:

Հայ ժողովրդական ծիսերգային բանահյուսության մեջ առառողեն կիրառված՝ այզի-խաղող-գինի-կարաս ձոներգային-օրինաբանական բնույթի գեղարվեստական դրսենորումները՝ իրենց տարբերակներով, բարբառային հանդերձով, ինչպես նաև խորհրդապաշտական հին շերտերով ու ձևակառուցվածքային հատկանիշներով մեկ անգամ ևս հավասարում են, որ դրանք ուղեկցել են առաջնապատիկ (ներկա դեպքում՝ խաղողի) օրինության և ճաշակման ծեսին, որն իրագործվել է նավասարդյան տոնախմբությունների ժամանակ (օգոստոս)՝ «Նոր պտղոց տոնին»¹¹¹, (Կույս-Ամանոր), որը և ծիսական վերարտադրությամբ ամրակայվեց քրիստոնեական (կույս-Մարիամ Աստվածածին) վերափոխման տոնով («Խաղողօրիներ»):

ОБРЯД ПЕРВОГО ПЛОДА И СЛАВЛЕНИЕ ВИНОГРАДА – ВИНА – КАРАСА В АРМЯНСКОМ РИТУАЛЬНО-ПЕСЕННОМ ФОЛЬКЛОРЕ

РАИСА ХАЧАТРЯН

Р е з ю м е

В армянском ритуально-песенном фольклоре особое место занимают танцевальные песни-славления, сопровождающие обряд вкушения первого плода, направленные на плодородие, долговечность, изобилие и

¹⁰⁶ Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն ց. Նոր ժողովածու..., սյր. Բ, էջ 48:

¹⁰⁷ Նոյն տեղում, էջ 51:

¹⁰⁸ FRI: 3247:

¹⁰⁹ Վ. Բ դ ո յ ա ն ն. Հայ ժողովրդական խաղեր, հ. 1, Երևան, 1963, էջ 137:

¹¹⁰ Վ. Վրդ. Պ ա ր տ ի զ ա կ ց ի. Բարեկենդան և արեղաթող, Վ. Պոլիս, էջ 86-88:

¹¹¹ Ա զ ա թ ա ն զ ե դ ո ւ ա ն յ ա ն ց. Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 466:

символизирующие связь этого обряда с жертвоприношением. Художественные проявления символической связи виноград – вино – карас в песнях хвалебно-славословного характера со своими вариантами и устойчивыми семантическими инвариантами свидетельствуют о том, что эти песни сопровождали обряд первого плода (в данном случае – обряд освящения и вкушения винограда), который у армян совершался во время навасардских празднований (девственница – Аманор) и который был ритуально воспроизведен в христианском празднике Успения Девы Марии-Богородицы (освящение винограда).

THE FIRST FRUIT RITE AND THE GRAPE – WINE - KARAS EULOGY IN ARMENIAN RITUAL SONGS

RAISA KHACHATRYAN

S u m m a r y

The Armenian ritual song folklore has a specific genre presented by eulogizing dance-songs that accompany the rite of enjoying the “first fruit”. These songs are aimed at fertility, longevity, abundance and symbolize the rite’s relation with sacrifice. Artistic manifestations of the grape – wine – karas (large jar) symbolic relation in these eulogizing songs, together with their variants and stable semantic invariants, testify to the fact that the songs once accompanied the rite of the first fruit (in our case – the rite of consecrating and enjoying grapes), which has been performed in the frames of the Navasd celebrations (virgin – Amanor) being nowadays ritually regained in the Christian festival of Virgin Mary’s Assumption (consecration of grapes).